ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2026 թվականի N 913 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 86-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 86-Ն որոշման՝

1) նախաբանից հանել «12-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի,» բառերը.

2) N 3 հավելվածի N 4 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

3) N 4 հավելվածում՝

ա. 3-րդ կետում «եկամտային հարկի և սոցիալական վճարի» բառերը փոխարինել «եկամտային հարկի, սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի»

բառերով, իսկ «հաշվեգրված (աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի դեպքում վճարված) են եկամուտներ» բառերը փոխարինել «հաշվեգրված (աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի դեպքում վճարված) եկամուտներից հաշվարկվել են դրոշմանիշային վճարներ» բառերով,

բ. 4-րդ կետում «եկամտային հարկի և սոցիալական վճարի» բառերը փոխարինել «եկամտային հարկի, սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի» բառերով,

գ. 4.1-ին կետում «եկամտային հարկի տարեկան հաշվարկի» բառերը փոխարինել «եկամտային հարկի, սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի տարեկան հաշվարկի (հայտարարագրի)» բառերով,

դ. 5-րդ կետում «Շահութահարկի հաշվարկի և (կամ) շրջանառության հարկի հաշվարկի և (կամ) միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության» բառերը փոխարինել «Անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի սոցիալական և դրոշմանիշային վճարների հաշվարկի կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության և դրոշմանիշային վճարի» բառերով,

ե. 7-րդ կետում «3-րդ, 4-րդ, 4.1-ին, 5-րդ և 6-րդ» բառերը փոխարինել «3-րդ, 4-րդ, 4.1-ին և 5-րդ» բառերով, իսկ «Ընդարձակ նշման լեզվի (XML) ձևաչափով» բառերը փոխարինել «ինքնաշխատ համակարգի միջոցով» բառերով,

զ. 8-րդ կետում «4.1-ին, 5-րդ և 6-րդ» բառերը փոխարինել «4.1-ին և 5-րդ» բառերով.

4) N 5 հավելվածում՝

ա. 2-րդ կետը «(այսուհետ՝ վճարող)» բառերից հետո լրացնել «, իսկ սույն կարգի 6-րդ կետում նշված դեպքերում՝ նույն կետում նշված անձանց» բառերով,

բ. 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով՝

«Դիմումը հարկային մարմին է ներկայացվում էլեկտրոնային եղանակով՝ բացառությամբ սույն կարգի 8-րդ կետով սահմանված դեպքերի: Սույն կարգի 6-րդ կետում չնշված դեպքերում հարկ վճարողներին դրոշմանիշային վճարների

պարտավորությունների սահմանված չափից ավելի վճարված գումարների վերադարձն իրականացվում է իրենց անվամբ բացված բանկային հաշիվներին։»,

գ. 2.1-ին կետում «Անհատ ձեռնարկատերերի և նոտարների» բառերը փոխարինել «Վճարողի» բառով,

դ. 2.1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝

«Հատուցման հիմնադրամը դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարները համապատասխան գանձապետական հաշվեհամարին փոխանցելուց հետո փոխանցված գումարի վերաբերյալ տվյալը հարկային մարմնի հետ փոխհամաձայնեցված կարգով, ինքնաշխատ էլեկտրոնային եղանակով տրամադրում է հարկային մարմնին՝ դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարները վերահաշվարկելու համար։»,

ե. 2.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2.2. Հատուցման հիմնադրամը սույն կարգի 2.1-ին կետում նշված անձանց կողմից վճարված դրոշմանիշային վճարները Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշման N 3 հավելվածով սահմանված կարգով վերադարձրած լինելու դեպքում դրա մասին տեղեկատվությունը սույն կարգի 2.1-ին կետում նշված ժամկետում, կարգով և եղանակով տրամադրում է հարկային մարմնին՝ դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարները վերահաշվարկելու համար։ Սույն կետում նշված դեպքում, եթե ֆիզիկական անձը հաշվետու տարվա եկամուտներից դրոշմանիշային վճարներ է վճարել ինչպես ինքնուրույն, այնպես էլ հարկային գործակալի միջոցով, և դրոշմանիշային վճարները վերադարձվել են մասնակի, ապա համարվում է, որ դիմումի հիման վրա սահմանված կարգով նախ վերադարձվել են ֆիզիկական անձի կողմից ինքնուրույն հաշվետու տարվա եկամուտներից հաշվարկված և վճարված դրոշմանիշային վճարները։ Ընդ որում՝ դրոշմանիշային վճարներն ինքնուրույն վճարողների դեպքում նախ համարվում են վերադարձված որպես անհատ ձեռնարկատեր կամ նոտար վճարված դրոշմանիշային վճարները, այնուհետև՝ որպես հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ վճարված դրոշ-

մանիշային վճարները, որից հետո՝ որպես Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված անձից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ վճարված դրոշմանիշային վճարները:»,

զ. 4-րդ կետը «հարկային մարմնում առկա» բառերից հետո լրացնել «կամ հատուցման հիմնադրամից ստացված» բառերով,

է. 5-8-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Դրոշմանիշային վճարների պարտավորությունների սահմանված չափից ավելի վճարված գումարները վերադարձվում են դիմումատուին սույն կարգի 2-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Դրոշմանիշային վճարների գումարների վերադարձն իրականացնում է գանձապետարանը՝ գումարը փոխանցելով վճարողի բանկային հաշվին՝ բացառությամբ սույն կարգի 6-րդ կետում նշված դեպքերի:

6. Դրոշմանիշային վճարների գումարների վերադարձը հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված՝ իր բանկային հաշվից տարբերվող այլ հաշվին իրականացվում է հետևյալ դեպքերում՝

1) բանկային հաշիվներ չունեցող կազմակերպություններին գումարների վերադարձն իրականացվում է՝

ա. կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում՝ իրավահաջորդ կազմակերպության բանկային հաշվին,

բ. լուծարված կազմակերպությունների դեպքում՝ կազմակերպության նախկին մասնակցի բանկային հաշվին՝ մյուս նախկին մասնակիցների համաձայնությամբ (եթե առկա են մեկից ավելի նախկին մասնակիցներ),

գ. լուծարված պետական կառավարման համակարգի մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների դեպքում՝ համապատասխան գանձապետական հաշիվներին.

դ. հաշվառումից հանված՝ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների դեպքում՝ դրանց հիմնադրի կամ հիմնադրի

կողմից լիազորված անձի բանկային հաշվին՝ մյուս հիմնադիրների համաձայնությամբ (եթե առկա են մեկից ավելի հիմնադիրներ).

2) անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի մահվան դեպքում՝ ժառանգի անձնագրային տվյալներով բացված բանկային հաշվին՝ մյուս ժառանգների համաձայնությամբ (եթե առկա են մեկից ավելի ժառանգներ).

3) բանկային հաշիվներ չունեցող հաշվառումից հանված անհատ ձեռնարկատերերին և պաշտոնից ազատված նոտարներին գումարների վերադարձն իրականացվում է վերջիններիս՝ որպես ֆիզիկական անձ, անձնագրային տվյալներով բացված բանկային հաշիվներին.

4) պետական ոչ առևտրային կազմակերպություններին և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին գումարների վերադարձը կարող է իրականացվել նաև նրանց գանձապետական հաշիվներին:

7. Դրոշմանիշային վճարների գումարները վերադարձվում են սույն կարգի 6-րդ կետին համապատասխան այդ գումարներն ստանալու իրավասություն ունեցող անձանց՝ նրանց կողմից հարկային մարմին ներկայացված՝ սույն կարգի 2-րդ կետում նշված դիմումի հիման վրա՝ բացառությամբ սույն կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունում նշված դեպքի:

8. Սույն կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա», «բ» և «դ» պարբերություններում և 2-րդ ենթակետում նշված դեպքերում սույն կարգի 2-րդ կետում նշված դիմումը հարկային մարմին է ներկայացվում թղթային տարբերակով, և դիմումին կից ներկայացվում են նաև իրավահաջորդությունը, նախկին մասնակից, հիմնադիր (ոչ ռեզիդենտ կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների դեպքում՝ դրանց հիմնադիր կամ հիմնադրի կողմից լիազորված անձ) հանդիսանալու փաստը, մեկից ավելի նախկին մասնակիցների, հիմնադիրների առկայության դեպքում՝ մյուս նախկին մասնակիցների, հիմնադիրների համաձայնությունը հավաստող, ժառանգությունը և անձի նույնականացումը հավաստող, մեկից ավելի ժառանգների առկայության դեպքում՝ մյուս ժառանգների համաձայնությունը հավաստող համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաև բանկի կողմից տրված տեղեկանք, որը կհավաստի, որ ներկայացված բանկային հաշիվը պատկանում է դիմումատուին:»,

ը. լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ և 10-րդ կետերով՝

«9. Էլեկտրոնային տարբերակով ներկայացված դիմումում նշված հաշվի՝ ֆիզիկական անձ հանդիսացող դիմումատուին պատկանելիության և վավերականության հավաստման նպատակով հարկային մարմինն առցանց եղանակով (WEB ծառայության միջոցով) հարցում է կատարում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

10. Էլեկտրոնային տարբերակով ներկայացված դիմումում նշված հաշվի՝ դիմումատուին պատկանելիության և վավերականության հավաստման նպատակով սույն կարգի 6-րդ կետի 4-րդ ենթակետում նշված դեպքում հարկային մարմինը հարցում է կատարում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:»,

թ. ԴՎ N 1 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի,

ժ. ԴՎ NN 2 և 3 ձևերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի «ա», «բ» և «է»-«ժ» պարբերությունների:

3. Սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի «ա», «բ» և «է»-«ժ» պարբերություններն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

4. Սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «ա»-«դ» պարբերությունների և 1-ին կետի 4-րդ ենթակետի «գ»-«ե» պարբերությունների գործողությունը տարածվում է 2026 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ